ՕՏԱՐՆԵՐԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍԻՆ

Բելգիայի Նամուր գավառում գտնվում է բենեդիկտյան Շեվետոնյը վանքը, որի միաբանությունը «աշխատում է Արևելքի մասին ծանոթություն տարածել Արևմուտքի կաթոլիկության մեջ, նպաստելու համար եկեղեցիների և ժողովուրդների մերձեցման և օգնելու համաշխարհային խաղաղության գործին»։

Միաբանությունն ունի իր պարբերաթերթը՝ «Իրենիկոն» (Irénikon), որի էջերում օգտակար և շահեկան տեղեկություններ են տրվում արևելյան եկեղեցիների մասին։

Միաբանության անդամներից հոգեշնորհ Հ. Դենիս Գիյոմը, որը գիտի նաև հայերեն, հատկապես զբաղվում է Հայաստանյայց Եկեղեցու պատմության և նրա արդի վիճակի ուսումնասիրությամբ։

«Իրենիկոն»-ի 36-րդ համարում, 1963 թվականին, Հ. Դենիս Գիյոմը հրատարակել է մի ուսումնասիրություն «Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին» վերնագրով, որը գրավում է պարբերաթերթի 258—263 էջերը։

«Իրենիկոն»-ի 294-րդ էջում, հարգելի բենեդիկտյանը գրախոսելով հանգուցյալ Տ. Սահակ եպիսկոպոս Կոգյանի վերջերս հրատարակած «Հայոց Եկեղեցի» աշխատությունը, ի միջի այլոց գրում է հետևյալը.

Այսուհանդերձ մարդ ապշած է մնում այն նեղմտությունից, որով ներթափանցված է քույր մի Եկեղեցու առաքելականության և ինքնագլխության դեմ հակաճառող այս երկը։ Կոգյանի գիտական հետազոտություններն անկասկած կարող էին նրան առաջնորդել դրական իմաստով պատմական մի սինտեզի մշակմանը, փոխանակ առիթ հանդիսանալու, որ նա այդպիսի հսկայական մի քար արձակի Լուսավորչական Եկեղեցու դեմ այն ժամանակ, երբ վերջինիս բարյացակամ դիրքը Հռոմեական Եկեղեցու հանդեպ երբևիցե չէր արդարացնում նրա այդ վարմունքը։ Դա աներդաշնակ մի հնչյուն է էկումենիկ մեր դարաշրջանում, և պետք է ասել, որ լուսավորչական հայերը խիստ վրդովվեցին նրանից։ «Հասկ»-ը իր 1962 թվականի փետրվար—մարտ համարում արձագանքեց նրան «Հրավեր սիրո և գործակցության» վերնագիրը կրող մի հոդվածով, որով կոչ էր արվում հայ կաթոլիկ հայերին «պապից ավելի պապական» ցույց չտալ իրենց և ավելի հավատարմորեն հետևել Հովհաննես ԻԳ պապի օրինակին և պատգամներին՝ հասնելու համար խաղաղության և եկեղեցիների միության»։

Ինչպես երևում է, Հ. Դենիս Գիյոմը չի կարդացել «Էջմիածին» և «Սիոն» ամսագրերի պատասխանները, նույն օրերին գրված Կոգյան Սահակ եպիսկոպոսի «Հայոց Եկեղեցին» աշխատության դեմ։